№ 195 Նոյեմբերի 5 (17) 1880 Նոյեմբերի 5 (17) № 195

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ:
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Օտարաքաղաքացիք վճռում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՊՐԻԿԱԶԸ ՄԵԾ Իշխան Փոխարքայի Թոյլատուութեամբ 1880 թուականի Նոյեմբերի 1-ից մուտքերին տալիս է հետևեալ %:

1) Անժամանակ մուտքերին այսինքն մինչև պահանջելը. 4%
2) Մէկ, երկու և երեք տարով 4½%
3) Չորս և հինգ տարով 5%
4) Վեցից մինչև տասերկու տարով 5½%
5) Տասերկու տարուց աւելի 6%

Պրիկազը ընդունում է մուտքեր Ռուսաստանի բոլոր տեղերից, վարչական հիմնարկութիւններից, պաշտօնեաներից և մասնաւոր անձինքներից, վանքերից, եկեղեցիներից, քաղաքային և գիւղական հասարակութիւններից: Մուտքերը ընդունվում են նոյնպէս և փոստայով ուղարկված մի յայտարարութեան հետ հասարակ թղթի վրա: Անժամանակ մուտքերը մասնաւոր անձինքներից ընդունվում են 50 ր. ոչ պակաս, իսկ կառավարութենից 30 ր. ոչ պակաս իւրաքանչիւր անգամ: Ժամանակաւոր մուտքերը այլապէս չեն ընդունվում, եթէ ոչ դումարատիրոջ, կամ մուտքը յանձնողի անունով, իսկ անժամանակ մուտքերը կարող են լինել կամ անանուն, կամ մոցնողի անունով: Մուտքերը ցանկացողներին նոյն օրը կը վերադարձնվեն: Աւելի մանրամասն պայմանները մուտքերը ընդունելու և վերադարձնելու մասին յայտնված են 941 յօդ. XIII բաժնի հրատարակութիւն 1857 թ. և 1863 թ. կանոնադրութեան Կովկասեան Պրիկազի:

1—3

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ներքին տեսութիւն: Նամակ Երեւանից: Նամակ Շամախուց: Նամակ Աստրախանից: Նամակ Շուշուց: Նամակ Գանձակից: Նամակ Գօրուց: Ներքին լուրեր:—Արտաքին տեսութիւն: Ֆրանսիա: Պարսկաստան: Արեւելեան գործեր:—«Մշակի» հեռագիրներ:—Յայտարարութիւններ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

—

24-ին հոկտեմբերի

Երևանի քաղաքային խորհրդարանի իրաւասուներից մէկը քաղաքում գիմնազիայի բացման հարցի վրա խօսելիս՝ շատ իրաւացի կերպով նկատեց, որ այդ հարցը այն նշանաւոր հարցերից մէկն է, որի նմանը հազիւ կարողանայ պատահել խորհրդարանին վճռելու իւրաքանչիւր տասը տարուց յետոյ:

Խօսենք այդ անհրաժեշտ խնդրի վրա:

Ես առիթ եմ ունեցել յայտնելու «Մշակի» միջոցով, որ դեռ ևս անցեալ տարվայ հոկտեմբեր ամսում, այսինքն սրանից ուղիղ մի տարի առաջ, խորհրդարանը վճռել էր տալ գիմնազիայի շինութեան համար քաղաքապատկան այն դատարկ հողը, ուր պէտք է շինվէր կաթոլիկների եկեղեցին, ոստիկանատանից բարձր, Աստաֆեվկի փողոցի վրա: Այս տարվայ մարտի 20-ին եղած նստում, խորհրդարանը, առիթ ունենալով կրկին խորհրդածելու այդ հարցի մասին, որոշեց խնդրել լուսաւորութեան մինիստրութիւնից, որ թոյլ տրվի քաղաքին գիմնազիայի հետ միասին բաց անել և բէալական ուսումնարանի զուգընթաց դասարաններ, որովհետև ժողովուրդը աւելի մեծ պահանջ է զգում այս վերջինիս: Տեղւոյս պրոգիմնազիայի վերատեսուչ պ. Վինոգրադովն այս վերջին օրերում դարձեալ առիթ տուեց գիմնազիայի բացման հարցը արծարծելուն, բայց դժբախտաբար խորհրդարանի նստերը չեն կայանում որ կարողանանք հաղորդել, թէ ի՞նչ եզրակացութեան է գալու նա այդ խնդրի վերաբերութեամբ: Պ. Վինոգրադովը յայտնելով, որ Կովկասեան շրջանի հոգաբարձուն քաղաքի նուիրած հողը շատ սակաւ է համարում գիմնազիայի շինութեան համար, խնդրում է խորհրդարանին աւելացնել այդ հողի վրա նրան կից եղած պ. Ղզրզանեանցի հողը, իսկ եթէ այդ չի յաջողվի, այն ժամանակ մի առանձին ընդարձակ տեղ որոշել Երևանի հին բերդում: Մեր կարծիքը բոլորովին համաձայն է այն մտքի հետ, որ գիմնազիան բերդում լինելով, աշակերտների առողջութեանը վնաս կարող է բերել, որովհետև քաղաքի կենտրոնից շատ հեռու ընկած կը լինի, և ուսանողները պարտաւորված կը լինեն մանաւանդ ձմեռվայ ցրտերին տասնաւոր ցխոտ ու կեղտոտ փողոցներով երթևեկութիւն անել դասեր լսելու համար: Առողջական կէտից նայելով, գիմնազիային նուիրած այժմեան տեղը նոյնպէս անյարմար է. անյարմար կը լինի, եթէ մինչև անգամ պ. Ղզրզանեանցի հողը կցուի նրա հետ, որովհետև այդ տեղը ընկած լինելով քաղաքի դլխաւոր փողոցի վրա, միշտ շարժողութիւնը և փոշին պիտի վնասեն թէ աշակերտների դասերին և թէ նրանց առողջութեանը: *) Մենք կառաջարկէինք մեր քաղաքացիներին նուիրել այդ նպատակի համար Անգլիական այգու 1/10 մասը, նրա դէպի արևելեան կողմը, ուղղակի հիւսիսից դէպի արևմուտք բաժանելով նրան այգուց, որ դարձեալ բաւականին ընդարձակ կը լինի քաղաքացիների զբօսանքի համար: Գիմնազիայի համար նշանակելի այդ անհրաժեշտ մասը դարձեալ այնքան մեծ է, որ բացի գիմնազիայի շինութիւնից, նրա հիւանդանոցից, խոհանոցից և այլ պահարանների համար հարկաւորելուց, ուսանողները կունենան բաւական ընդարձակ մարմնամարզարանի և խաղալու ու մանդալու տեղ:

Կարծելով, որ խորհրդարանի ընտանեկան գործերով խիստ զբաղված իրաւասուները դեռ երկար ժամանակ նիստ չեն ունենալու, մենք շտապեցինք մեր առաջարկութեան վրա գրաւելու նրանց ուշադրութիւնը: Հաւատացած ենք, որ մեր խօսքերի մէջ այնքան անկեղծութիւն կայ, որ ամենքը կը համոզվեն նրանում և չեն ընդունի „իբրև ձայն բարբառոյ յանապատի“:

Այս հարցը վերջացրած համարելով, պատմեմ մի, երկու լուր: Վերջին օրերում մեզ մօտ ժամանեց երկրաչափ պ. Վասիլևը, որի գիտաւորութիւնն է, ինչպէս երևում է պաշտօնական թղթերից, տեղեկութիւններ հաւաքել Երևանի նահանգի տնտեսական դրութեան մասին: Նա, պատմում են, շատ զարմացած է մնացել մեր խաղողի գերազանց յատկութիւնների վրա: Մենք վաղուց հաւատացած ենք այդ բանում և կասենք, որ եթէ մասնագէտ գինեգործներ ունենայինք, նրանք կապացուցանէին ամբողջ աշխարհին, որ Երևանի գինին շամպանեա գինու հետ կարող է մրցել, որ Երևանը իր շրջականերով այն երկիրն է, որ իսկապէս նեկտար է պարգևում իր ժողովրդին և ո՛չ թէ հասարակ արբեցնող հեղուկ....Ինչո՞ւ աւելի շատ չը պէտք է մտածենք այնպիսի ուսումնարաններ ունենալ, որոնք հիմը կազմեն գործնական մարդիկ պատրաստելու մեզ համար....Ինչ և իցէ:

Յովհաննէս-Հեթում:

*) Վնասակար ազդեցութիւն կունենայ աշակերտների առողջութեան վրա առաւելապէս պ. Յ. Եղիազարեանցի շինվող բաղնիքը, որ ընկած է այդ տեղից սի յիսուն քայլ հեռու: Եւ իրաւ, չէ կարելի ստիպել քանդելու մի շինութիւն, որի վրա տէրը ծախս է արել 50—70 հազար մանէթ փող: Այդ բանը պէտք էր մտածել առաջ. այժմ շատ ուշ է, թէեւ շատերն են այժմ խօսում այդ բաղնիքի ապագայ վնասակար հետեւանքների մասին:

ՆԱՄԱԿ ՇԱՄԱԽՈՒՑ

—

20 Հոկտեմբերի

1859 թուի սաստիկ երկրաշարժից յետոյ, 20 տարվայ ընթացքում, Շամախու արքունական վարժարանը՝ հինգ տուն փոխելով՝ վերջապէս արժանացաւ ունենալ իր սեփական նորաշէն (արքունի ծախքով) դեղեցիկ տունը, շնորհիւ նոյն վարժարանի այժմեան տեսուչ պ. Ի. Ռ. Փիրբուդաղեանցի, որը կարողացաւ իր անխոնջ աշխատութեամբ, մի տարվայ ընթացքում, մի այնպիսի հոյակապ շինութիւն գլուխ բերել, որի թէ մեծութեանը, թէ դիրքին և թէ գեղեցկութեանը նայելով, հաղիւ թէ քաղաքում կարող է հաւասարվիլ մի որ և իցէ տուն: Այս անցեալ սեպտեմբերի 18-ին քաղաքային վարժարանը այնտեղ փոխադրված լինելով, ուսումն սկսելու մաղթանք կատարվեց հանդիսաւոր կերպիւ: Հանդիսին ներկայ էին քաղաքիս ռուսաց, լուսաւորչական հայոց և մահմեդականների հոգևորականութիւնը, քաղաքիս նշանաւոր ազնիւներից թէ ծառայող ատիճանաւորներից և թէ վաճառական դասից պատուաւոր քաղաքացիներ: Այնտեղ նախաճաշիկ էր պատրաստված պ. Փիրբուդաղեանցի շնորհիւ հանդիսին հրաւիրված անդամների համար: Նոյն միջոցին պ. Փիրբուդաղեանցն՝ տեսնելով հիւրերի ոգևորութիւնը և այն անկեղծ շնորհակալութեան արտայայտութիւնը, որ ցուցանում էին իրան՝ ուսումնարանի շինութեան վրա հոգալուն և յաջող կերպիւ վերջացնելուն համար, վստահացաւ տեղոյս պրոկուրորի օգնական պ. Նաւորսկու խորհրդով առաջարկել նրանց կազմելու մի ընկերութիւն իր վարժարանի աղքատ աշակերտներին նիւթապէս օգնելու նպատակով: Առաջարկութիւնը մեծ ուրախութեամբ ընդունվեցաւ հիւրերից, որոնք իսկոյն ստորագրութիւն բացին և ժողովեցին 150 ռուբլու չափ գումար: Յետոյ գրվեցաւ սահմանադրութիւն (протоколъ) և ապա ընկերութեան կանոնադրութիւնը „Общество для вспомоществованія бѣднымъ ученикамъ Шемахинскаго городскаго училища“ վերնագրով, որն իսկոյն ուղարկվեցաւ ուղղակի Կովկասի ուսումնարանների ընդհանուր հոգաբարձուին, որ սա էլ ներկայացնէ Նորին Կայսերական Բարձրութեան Կովկասու Փոխարքային հաստատութեան համար: Ընկերութեան նպատակն է օգնել չքաւոր աշակերտներին, առանց խտրութեան կրօնի և ազգութեան, որ աւարտեն իրանց ուսումն, առնելով նրանց համար ուսման առարկաներ, հագուստ և չունեցողին բնակութեան տեղի. ևս և յաջող աւարտող և բարոյական չքաւորին միջոց տալ այստեղ ուսումը աւարտելուց յետոյ գնալ միջնակարգ ուսումնարան մտնելու:

Ա. Ազատեանց

—

ՆԱՄԱԿ ԱՍՏՐԱԽԱՆԻՑ

—

21 հոկտեմբերի

Ներկայումս Աստրախանի հասարակութիւնը իր ցանկացած դրութեան մէջ է գտնվում, այսինքն՝ հանգիստ, անգործ, բոլորովին անշարժ։ Հոգևոր դպրոցների համար հոգաբարձուներ ընտրեցին, մեծ մասը ուսումնական երիտասարդ անձինք, նրանք էլ, իբրև նրա ընտրված, իբրև նոր մարդիկ կամեցան մի նոր բան անել։ Հոգևոր դպրոցների հին, առաջվայ ընթացքը առանց քննելու, առանց նրա թերութիւններին լիովին վերահասու լինելու, նորից կանոնադրութիւն կազմեցին, ժողով հրաւիրեցին, առաջարկեցին իրանց նորա ձևը, ըստ տիպեցին հասարակութեանը անպատճառ ընդունել նորան և փող տալ իրանց նորան իրագործելու համար, հակառակ դէպքում, սպառնացին, որ իրանք հրաժարական կը տան։ Ժողովի մէջ նոյն իսկ նորընտիր հոգաբարձուներից մէկը, որ անհամաձայն էր իր պաշտօնակիցների մտքերին, ոտքի ելաւ, տաք տաք խօսեց, նրանց կանոնադրութիւնը հերքեց, անպէտք համարեց, ,,մեզ հայ հոգով դաստիարակված մայրեր են հարկաւոր'', ասաց, և այլ այսպիսի բաներ։ Հասարակութեան հրճռունքին չափ չը կար, նա միաձայն հաւանութիւն տուեց ուսումնական երիտասարդի մտքերին, մերժեց հոգաբարձուների առաջարկութիւնը, և հոգաբարձուները դժգոհութեամբ հրաժարական տուեցին և դուրս եկան ժողովից։ Իսկ հասարակութի՞ւնը։ Հասարակութիւնը իր կողմից մեծ գործ կատարած և իր պարտաւորութիւնը աւարտած համարելով, չը հոգաց կրկին նոր հոգաբարձուներ ընտրելու, և ուսումնարանները մի աշխարհական և մի հոգևորական հոգաբարձուի յանձնելով, թողեց, գնաց տօնավաճառ։ Իսկ երիտասարդ, ճարտարախօս հոգաբարձուն էլ գոհ և բաւական մնալով իր յաղթութիւնով, այնուհետև աղատ համարելով իրան պաշտօնից, թողեց, գնաց իր աղահանքին վերահասու լինելու, ամբողջ ամառը այնտեղ անցկացրեց, առանց մտնելու դպրոցական գործին։ Այժմ հասարակութիւնը վերադարձել է տօնավաճառից, բայց դեռ իր անձնական և առևտրական գործերով է զբաղված, դեռ ո՛չ ժողովի ձայն է լսվում և ո՛չ ընտրութեան։ Հա այսպէս, մենք ինքներս չենք հոգ տանում մեր դպրոցների կառավարութեան մասին, այն ինչ նեղանում ենք, երբ տեսնում ենք, որ նրանք կառավարվում են մասնաւոր անձերի ձեռով։ Մենք վերաւորվում ենք, տեսնելով, որ կամայականութեամբ, առանց հաշիւ ու համար անելու, նոր նոր դասատուներ են բացվում և մի երկու տարի գոյութիւն ունենալուց յետոյ փակվում են, մի տարուց յետոյ նորից բացվում, մտիկ ապագայում կրկին փակվելու համար։ Սրանում ո՞վ է մեղաւոր, եթէ ո՛չ մենք ինքներս։ Իսկ թէ ինչո՞ւ արդեօք մեզանում ժողովների մեծ մասը չեն կայանում, ահա իմ կարծիքը սրա մասին. հասարակութեան մէջ կան այնպիսի անդամներ, որոնք չեն գալիս ժողովին այն պատճառով, որ ոչ ժողով են հասկանում, ոչ հասարակական գործ և ոչ ազգութիւն։ Նոքա այնպիսի բարոյապէս անզգայացած դիակներ են, որ նրանց համար եկեղեցի գնալ և Աստուծուն պաշտելն էլ մի այնպիսի սովորական գործ է, ինչպէս խանութ գնալը, առուտուր անելը։ Կան այնպիսիներն էլ, որոնք թէպէտ ցանկանում են ժողովում գանվելը, խօսելը, դատելը, իրանց մտքերը, իրանց կարծիքները յայտնել, որոնք գուցէ աւելի առողջ դատողութիւն ունեն, քան թէ նոյն իսկ խօսողներից շատերը, բայց զանազան պատճառներով չեն խօսում, որովհետև հասարակութեան մէջ սաստիկ դիրք ունենալով, համարձակութիւն չունեն ազատ կերպով խօսելու, և կամ զանազան պատճառներով կախում ունեն այս կամ այն աղայից։ Ուստի մի քանի անգամ ժողովներին ներկայանալով, տեսնում են, թէ իրանք միայն այնտեղ կարասիքի տեղ են ծառայում, առանց իրանց միտքը որ և իցէ ճանապարհով յայտնել կարողանալու, և այս պատճառով դադարեցնում են իրանց երթևեկութիւնը։ Վերջապէս ցաւելով տեսնում ենք, որ մեր հասարակական գործերը, ժողովների չը կայանալու պատճառով, յետ մնում, ամբողջ տարին մի երկու հարց են մնում, ամբողջ տարին մի երկու հարց հազիւ է վճռվում, այն էլ վայրիվերոյ կերպով։ Իմ կարծիքով, այս երևոյթը մեր հասարակական կեանքի ամենասև կողմն է։ Մեր ժողովների մէջ առհասարակ քուէարկութիւնը ամենայետին տեղն է բռնում, փոխանակ առաջին տեղը բռնելու։ Որքան ես նկատել եմ, մեզանում ոչ թէ հարցերը չեն լուծվում քուէարկութիւնով, այլ և ընտրութիւններ են կատարվում առանց քուէարկութեան։ Շատ անգամ ձանձրացած լինելով նիստի երկարատևութիւնից, և կամենալով շուտով աւարտել ժողովը, յանկարծ աղաներից մինը տեղից վերկենալով բղաւում է, միւսներն էլ անգիտակցաբար ձայն են տալիս նորան և սորանով աւարտվում է ընտրութիւնը։ Այստեղ ո՞վ է կարող երաշխաւոր լինել ձայների առաւելութեան մասին, մինչև որ օրինաւոր քուէարկութիւն չը լինի։ Քուէարկութեամբ միայն ամեն մինը ժողովականներից կարող է յայտնել իր ազատ հաւանութիւնը կամ անհաւանութիւնը։ Քուէարկութիւնը այն օգուտը ունի, որ ամեն մէկը, առանց երկիւղ ունենալու այս կամ այն աղայի վրէժխնդրութիւնից, կարող է ընտրել իր ցանկացած անձին։ Ամենավատն այն է, որ մեր ժողովները օրինաւոր նախագահ ևս չունեն, որ վեճաբանութիւնների ժամանակ կարգ և կանոն պահպանէ. ամեն հարց առաջարկվում և վճռվում է ամենաանկարգ կերպով։

***

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒՑ

—

22 հոկտեմբերի

Ինձ վրա բարդված մի քանի անտեղի կասկածներ ցրելու առթիւ հարկ կը համարեմ «Մշակի» № 183 համարում գրած իմ նամակիս մի քանի կէտերի վրա երկու խօսք ասել։

Խօսելով հայ վաճառականների վրա, ես աւելացրել էի, որ մի թիֆլիսաբնակ պարոն կաշառելով իր հաշուապահին, իրենց մէջ կազմված ընկերութիւնից ահագին գումարներ է կլանել։ Ուստի շատերը այնպէս էին կարծում, որ ես լինելով «Միրզ. Հարուն. և ընկ.» հաշուապահ, այդ ընկերութեան մի որ և է անդամի վրա էի ակնարկել։ Պատասխանում եմ—ո՛չ երբէ՛ք, ես անիրաւութիւն կը համարէի մի վիրաւորական խօսքով անգամ արատաւորել նրանց պատիւը և համարումը, քանի որ նրանց հայելու պէս պարզ հաշիւները ապացոյց են նրանց ճշմարտութեանը։ Ես խօսել էի բոլորովին մի այլ անձնաւորութեան՝ պ. Ն. Մ-ի վրա—որի անունը չը յիշելով, չէի ուզեցել նրա պատուին դիպչել։ Իսկ նրանց, որոնք վերոյիշեալ պարոնների վրա կասկածելու առիթ են ունեցել, այդպիսիներին յայտնում եմ իմ կատարեալ արհամարհանքը, յիշեցնելով մի և նոյն ժամանակ իրանց աններելի սխալմունքը այդ մասին։

Երկրորդ՝ խօսելով մետաքսէ գործարանների վրա, ես ակնարկել էի ոչ թէ մեր, այլ ընդհանրապէս հայերի ունեցածներուն համար, որոնց մի քանիսից անցեալներում մի քանի անգամ խարդախութիւն էր պատահել, այն էլ ոչ թէ շուշեցիներից։

Արկնում եմ, ես գրել եմ ընդհանուրի և ոչ թէ մասնաւորների կամ անհատների վերաբերութեամբ։

Իսկ ինչ վերաբերում է մի քանի Գաֆիների և Պիրակոսների, որոնք իմ նամակների առթիւ զայրացած են, այդպիսիներին միայն կը պատասխանեմ իմ լուռ արհամարհանքով։

Արդարև, ճշմարիտ է ասում պ. Աստաֆին՝ թշնամիներ չաշխատելու համար չը պէտք է թղթակցել «Մշակին». մենք շղոքորթել չենք կարող, իսկ մեր հասարակութիւնը սիրում է շղոքորթութիւն։

Մի խօսք էլ պ. Թ. Ռ-ին. բարեկամ, դուք մի և նոյնը չէք, որ ակնյայտ մի պարոնի փողերը տակով անելուց յետոյ, այսօր կրկին շարունակում էք ձեր առևտուրը և այսօր էլ հասարակութեան մէջ ուրիշների վրա բամբասելուց չէք դադարում։

Խնդրեցէք, որ իմ գրուածքը քեզպէսներին էր վերաբերում, այո՛, ձեզպէսներին և ոչ թէ նրանց, որոնց դուք կարծում էք։

Այս կը լինի իմ վերջին նամակը Շուշուց «Մշակին»։

Աբել Աղրեսեանց

—

ՆԱՄԱԿ ԳԱՆՁԱԿԻՑ

—

27 հոկտեմբերի

Գանձակի պ. նամակիրը «Մշակի» 131 եւ 176 համարներով հաշիւ է պահանջում ցորենի կոմիտեի անդամներից հացի առեւտուրի վերաբերութեամբ։ Սեպուհ պարտաւորութիւն է ամեն մի հասարակական գործակատարի իր գործունէութիւնը վերջացնելուց յետոյ մանրամասնաբար հաշիւ ներկայացնել նոյն իսկ հասարակութեանը, ապա ընդհանրութեանը։ Թէեւ մեր առեւտուրը դադարեց սոյն ամի յունիսի 18-ին, բայց կոմիտեի անդամներից ոմանք Գանձակում չը լինելու պատճառաւ հաշիւը մնաց անվերջանալի։

Սմոյս 16-ին, երեկոյեան ժամ 4-ին ուսումնարանի դահլիճում ժողով կազմվեց հաշուէտուութեան վերաբերմամբ, բայց մի քանի հանգամանքներ արգելք լինելով, չը վերջացաւ։

Ուստի, որպէս կոմիտեի անդամ, ինձ պարտաւորութիւն համարելով հրատարակում եմ համառօտ հաշիւը ի լուր հասարակութեան։

Կոմիտետը ցորենի տացել է քաղաքային գումարից 10,000 ռուբլ, հասարակութիւնից փոխարինաբար եւ առանց տոկոսի 10,320 ռ., իսկ նուիրատուութեամբ 502 ռ., ընդամենը 20 822 ռ.։ Ցորենի կոմիտետը իր գործունէութիւնը, որի նպատակն էր հացի առեւտուրով պարապել եւ նրա գինը չը թողնել արհեստական կերպիւ բարձրանալ, սկսել է ի 28-ն նոյեմբերի 1879 ամի ց18-ն յունիսի սոյն ամի, դնել է թէ Գանձակում եւ թէ Թիֆլիսում ամեն ցորենն 15,026 պուդ 26 ֆունտ, ալիւր 1273 պուդ 5 ֆունտ, զարդաղալի 4143 պուդ 32 ֆունտ եւ մէշոկ 1723 հատ։ Վաճառել է թէ հասարակութեան, թէ հացթուխների վրա ցորեն եւ թէ քաղաքային պօլիցային, (որն հասարակութեանը բաժանելոյ) ընդամենն ցորեն 14062 պուդ 7 ֆունտ, ալիւր 1212 պուդ 24½ ֆ., զարդաղալի 4042 փ. 26½ ֆ. եւ մէշոկ 853 հատ, մուտքը ծախսից դուրս գալուց յետոյ ամբարի վերակացուները մնում է ցորեն 672 պ. 36 ֆ., ալիւր 72 պ. 11½ ֆ., զարդաղալի 58 փ. 27½ ֆ. եւ մէշոկ 412 հատ, որի պատճառը կը պարզվի հասարակութեանը հաշիւ տալու ժամանակ։

Վերոյիշեալ 20,822 ռուբլիից վերադարձրած է հասարակութեանը 7936 ռուբլ, քաղաքային պօլիցային 1000 ռ., ապառիկ ստանալիք 668 ռ. 40 կ., կայ առժեքն դրամ 8500 ռ., 89 կոպէկ, ընդամենն 18105 ռ. 29 կ., ուրեմն մնում է պակասորդ 2716 ռ. 71 կոպէկ։

Իսկ ինչ որ մնում է պարոն նամակագրի այն խօսքերին «ոչ թէ կամեցան շուտով պատրաստել հաշիւները եւ հասարակութեան հետաքրքրութիւնը բաւականացնել, այլ ընդհակառակը սկսեցին որոնել նամակագրին, մէկ քանիներին սպառնալիքներ կարդալ, որից զրեթէ զարհուրած մեր քաղաքային բժիշկ պ. Համասփիւռը իր համառօտ նամակով «Մշակի» 151 համարում յայտնեց, որ նամակի հեղինակը ինքը չէ»։ Կոմիտեի անդամները ոչ պ. բժշկին եւ ոչ որեւիցէ անձի սպառնալիք չունեն կարդացած, այդպիսի խօսքերը եթէ ոչ աւել. գոնէ կատարեալ զրպարտութիւն է։

Կոմիտեի անդամ Յակոբ Լիւսեկեանց

—

ՆԱՄԱԿ ԳՕՐՈՒՑ

—

27 հոկտեմբերի

Գօրու քաղաքացի Եսայի Տէր-Դաւթեանցը, որ վախճանեցաւ 1864 թուին, իր բոլոր շարժական եւ անշարժ կայքը կտակեց ազգային եկեղեցիներին եւ ուսումնարաններին, բացի մի աննշան գումարից, որ կտակել էր իր ժառանգներին։ Կտակած բոլոր գումարը մասնաբաժնելուց եւ նորա թաղման ծախսը հոգալուց յետոյ, աւելացած գումարը պէտք է տրվէր արքունի բանկը եւ նրա տոկոսիքը տարէց տարի պէտք է բաժանվէր՝ կէսը Գօրու երեք եկեղեցիներին եւ կէսը քահանաներին, իսկ քահանաները նորա մահուան ամեն տարեդարձին հոգեհանդիստ պիտի կատարէին եւ երեցփոխանները կանթեղներ պիտի վառէին եկեղեցիներում։ Այս կտակաւանդութեան վրա հոգեւոր իշխանութեան կողմից նշանակված էր հաւատարմատար քաղաքիս Ստեփաննոս աւագ քահանայ Տէր-Ստեփաննոսեանցը, որ վաղուց արդէն հանդուցեալի կտակած գումարը, (որ հասնում էր մինչ 50,000 ռուբլի) մասնաբրել է ամենին եւ իրան աշխատանաց համար էլ մօտ չորս հինգ հազար ռուբլի ստացել է, բայց մինչեւ հիմայ քաղաքիս խեղճ քահանաները եւ եկեղեցիները ոչ մի կոպէկ չեն ստանում եւ ոչ հոգեհանդիստ կատարվում։

Սորա համար հրաւիրում ենք նոցա ուշադրութիւնը, ումից որ կախումն ունի տնօրինելու։

Զը նայելով, որ Գօրու ծխական երկսեռ դպրոցները արդէն սեպտեմբերի մէկից փակված են, պ. Թեմական տեսուչը այս ծանրակշիռ հանգամանքները փոխանակ աչքի առաջ ունենալու, անձամբ Գօրի գալու եւ իր պարտաւորութեան համաձայն երկպառակութեան առաջն առնելու, եւ դպրոցները բանալու, բաւականանում է միայն թուղթ թղթի վրա գրելով հոգեւոր կառավարութեան, որ ուսուցիչներին ռոճիկներ բաժանեն։

***

—

ՆԵՐԲԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Ֆրանսիացի երեւելի գիտնական Բուրգո-Դիւկիւդրէ (Bourgaut-Ducoudray) անունով երաժիշտը, իբրեւ կոնսերվատորիայի ուսուցիչ, 1875-ին յանձնարարութիւն էր ստացել գնալ Յունաստան եւ Արեւելք ժողովրդեան տեղական երաժշտութիւնը երկասիրելու համար։ Զորս ամիս աշխատեցաւ Դիւկուդրէ այն տեղերը, որի պտուղն եղաւ նորա «Souvenir d'une mission musicale en Grece et en Orient» գրքոյկը։ Հարուստ հաւաքածուով զարձաւ հանճարեղ երաժիշտը Ֆրանսիա եւ հետո բերած եռեսուն հատ ընտիր երգերն ու պարերգերը ի լոյս ընծայեց պիանոյի յարմարացրած «Melodies populaires de Grèce et d'Orient» վերնագրով։ Զարմանալի աշխատանք է, կասեն սորա համար, երաժշտագէտները եւ մեծամեծ զովեստներ կը խօսին հեղինակին խորին երաժշտական գիտութեանը եւ նրա զարմանալի ճաշակին վրա, իսկ ինքը Դիւկիւդրէ շատ գեղեցիկ յատկութիւններ կը գտնէ արեւելեաց երգոց եւ եղանակաց մէջ եւ զմայլում է նոցա մելոդիների միագունութեանը, ազատութեանը, ճկունութեանը եւ մանաւանդ դեմպերի անուղղութեանցը, որ հիանալի ոյժ, գեղեցկութիւն եւ նորութիւն կուտան, ասում է, այն երգոց, հակառակ եւրոպացոց երաժշտութեանը, որի մելոդիների միակերպութիւնից ամենքը ձանձրացած են։ Թող այս ֆրանսիացի հանճարեղ երաժշտին խօսքերը մեր յանդուգն եւ խակ երիտասարդաց ականջներին օղեր լինին, որք ամեն բանի մէջ դերեւաբար եւրոպացածութեան հետեւելով, արհամարհանօք են մտիկ տալի նաեւ արեւելեան երաժշտութեան վրա եւ մեր ազգին ճաշակին եւ զգացմանցը հակառակ, իբր թէ եւրոպական եղանակներով երգեր են բաշխում ազգին, բազմաթիւ, բայց այն աստիճանի անճոռնի, որ օրինակ

կարող են դառնալ միայն երաժշտական անհնարին տգիտութեան եւ աններելի ճաշակի: Ցոյս ունենք, որ զգաստանան այսուհետեւ մեր պատուական օրիորդները եւ մերժեն իսպառ անախորժ եւ սխալանքներով ականջ զգուացնող ծիծեռնակները, սոխակները, դիմելով դոնեա վերոյիշեալ Ֆրանսիացու, շնորհել մեր սրտերի եւ զգացմանց յարմար, բնական արեւելեան եղանակներ: Գուցէ զգաստանան եւս, բայց դժուար, մեր այն աննման բառիշնէրը, որ երաժշտական հանդէսների մէջ, ծիծաղաշարժմունքներով եւրոպացուհեաց ծեւերին ուզելով հետեւել, հոռնում են մեքենայաբար, առանց զգացման, «когда-бъ онъ зналъ» եւ այլն ռոմանսներ, որպէս զի ծափահարութեամբ արժանանան, եւ յիրաւի էլ արժանանում են, բայց այն հանդիսականաց կողմից միայն, որոց զմայլումը առաւել կը վերաբերի երգչուհու կիսաբաց եւ բարձրաբերձ կուրծքին, քան թէ նոցա ծայնից սքանչելեացը: Երգն ու երաժշտութիւնը մարդկան սրտի ուրախութեան եւ տրտմութեան արծագանքն են,—լեզուն են, եւ եթէ աներկբայ կընդունենք թէ մտաց լեզուն ազգային պիտի, ոչ ապաքէն մեր երգն էլ ազգային, արեւելեան, եւ ոչ օտար պիտի լինի:

—

ԹԻՖԼԻՍԻ Քաղաքային Վարչութիւնը յայտնում է հետեւեալ տակա առաջին հարկաւորութեան մթերքների վրա, նոյեմբերի 1-ից մինչեւ 1 դեկտեմբերի ներկայ 1880 թի: Թխած հացը ցորենի ալիւրից 1 տեսակի, ֆունտը 6 կոպէկ, կրուպչատակայից ֆունտը $5^1/_2$ կ., խառն ցորենի ալիւրի ֆունտը $4^1/_2$ կ., Թոնրի մէջ թխած հացը 1 տեսակի ֆունտը $6^1/_2$ կ., երկրորդ 5 կ., տեղական հացը, լաւաշներ, խառն ցորենի եւ կրուպչատակայի ալիւրից 1 տեսակ $7^1/_2$ կ., 2-որդ 6 կ., 3-որդ $5^1/_2$ կ. տաւարի մսի ֆունտը առաջին տեսակի 8 կ., երկրորդ 7 կ., ֆիլէյ 14 կ., ոչխարի մսի ֆունտը 9 կ., այծինը 7 կ., խոզինը առաջին տեսակի 10 կ., երկրորդ 8 կոպէկ: Այդ տակսան չէ տարածվում դիւղական արդիւնաբերողների վրա, որոնք ծախսում են իրանց արդիւնքները Թիֆլիսի հրապարակների եւ վաճառանոցների վրա:

—

Նոյեմբերի 1-ին, շաբաթ օր, ԹԻՖԼԻՍՈՒՄ զգալի եղաւ ժամը 11-ին երեկոյեան երկրաշարժի մի հարուած:

—

ՇԱՄԱԽՈՒՑ մեզ գրում են որ հոկտեմբերի 10-ին ժամը 1 ու 40 րոպէին կէսօրից յետոյ զգալի եղաւ երկրաշարժի մի հարուած: Բազարում մի երեխայ եւ մի մշակ մնացել են մի շինութեան փլուածքի տակ: Մի քանի տներ վնասվել են:

—

Մեզ հաւատացնում են, որ նոյեմբերի 3-ին Թիֆլիսի հայոց մշտական խմբի դերասան պ. Սաֆրազեանց հրաժարական է տուել:

—

Շնորհակալութեամբ ստացանք Ս. Պետերբուրգից հայոց լեզուի պրոֆէսօր պ. Պատկանեանի մի նոր բրոշիւրը ռուսերէն լեզուով «Объ Археологической цѣнности фотографическаго альбома Арменіи, работы Куркчіанца» (պ. Քիւրքչեանի Հայաստանի ֆոտոգրաֆիական ալբոմի հնագիտական նշանակութեան մասին): Գիրքը տպված է Ս. Պետերբուրգում, ներկա 1880 թուին:

—

Լսում ենք, որ Թիֆլիսի հայոց Թարգմանական ընկերութիւնը դիտաւորութիւն ունի շուտով հրատարակելու Գամառ-Քաթիպայի բոլոր բանաստեղծութիւնները, հեղինակի պատկերով:

—

Գօղֆրուա եղբայրների ցիրկը կրկին եկաւ ԹԻՖԼԻՍ: Թիֆլիսեցիները ամեն ըան մոռացան, հայոց Թատրոն, օպէրա, վրաց Թատրոն, Բրօղսկու կօնցէրտներ,—եւ լցնում են ցիրկը, ձիերի վրա պար եկող աղջիկներին եւ կլօուններին տեսնելու համար:

ԸՐՏԵՐԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖՐԱՆՍԻԱ.

—

Փարիզից լրագիրներին գրում են հետեւեալը հոկտեմբերի 30-ից: Արդէն չորս օր է, ինչ հասարակութիւնը սպասում է կապուսինների եւ դոմինիկանների վանքերի փակելուն: Ամբողջ օրերով ամբոխը լցնում է փողոցները այդ վանքերի առջեւ, պոլիցիան դժուարութեամբ է կարողանում կարգ պահպանել: Բայց ի՞նչ է պատճառը, որ կառավարութիւնը օրից օր յետաձգում է այդ վանքերի փակելը, քանի որ նա վերջնականապէս վճռել է իրագործել մարտի հրամանները: Ամեն տեղ միաբանութիւնները վաղուց արել են պաշտպանական պատրաստութիւններ: Միւնոյն է, առանց յարձակմունքի, առանց դռները կոտրտելու եւ ոյժ գործադրելու գործը չի վերջանայ եւ եթէ վարչութիւնը արդէն սկսել է դիմել այդպիսի միջոցների, անհասկանալի է նրա դանդաղութիւնը այս դէպքում:

Մամուլի այն փոքրաթիւ մասը, որ պաշտպանում է մարտի հրամանների կատարելը, հասկացնում է հասարակութեանը, որ կառավարութիւնը, յետաձգելով գործը, կամենում է հանգստացնել հոգեւոր միաբանութիւններին, որպէս զի միջոց տայ պոլիցիային մտնել վանքերը առանց արգելքների հանդիպելու: Բարնաբիտների վանքը փակելու ժամանակ այդպիսի խորամանկութիւնը ճշմարիտ աջողվեցաւ: Պոլիցիականները մտան վանքը, ցոյց տալով իբր թէ կամենում են աղօթել եւ իրանց պաշտօնական նշանները միայն այն ժամանակ ցոյց տուին, երբ արդէն վանահօրը տեսան: Հազիւ թէ այդպիսի խորամանկութիւնը աջողվի այս անգամ եւ բացի այդ մի կառավարութեան համար անվայել է դիմել այդպիսի միջոցների:

Իսկապէս կառավարութեան դանդաղ գործելու պատճառները բոլորովին այլ են: Մինիստրութեան մէջ մեծ անհամաձայնութիւններ կան մարտի հրամանների կատարելու մասին, որովհետեւ դատարանը դեռ չէ յայտնել իր կարծիքը նրանց իրաւացիութեան մասին: Ժիւլ Ֆերրի, որ առաջ էլ ընդդէմ էր ներքին գործերի մինիստր Կոնստանի մտադրութիւններին, վերջին ժամանակները աւելի էլ յամառութեամբ սկսեց պահանջել, որ հոգեւոր միաբանութիւնների աքսորելը յետաձգվի: Մի ժամանակ մինչեւ անգամ լուր տարածվեցաւ, որ Կոնստան մտադիր է հրաժարական տալ: Բայց Գամբետտան շուտով վերջ դրեց մինիստրութեան տատանմունքին: Սրա բարեկամ Գլօկէին յանձնվեցաւ մի ճառ արտասանել Վալենսի մէջ, որ խիստ յարձակվում էր մինիստրութեան վրա մարտի հրամանների իրագործման ուշացնելու պատճառով: Ամբողջ ճառը մինիստրական նախագծի ձեւ ունէր եւ ամենքի համար հասկանալի էր, թէ Գամբետտա կամենում է նոյն կատակը խաղալ Ֆերրիի հետ, ինչ որ մի քանի ժամանակ առաջ նա խաղաց Ֆրէյսինէի հետ, ստիպելով այս վերջինին հրաժարական տալ:

Մեծ վեզիր Ֆերրի հասկացաւ փաղիշահ Գամբետտայի ցանկութիւնը եւ շտապով հնազանդվեցաւ պատգամաւորների ժողովի ամենազօր նախագահ Գամբետտայի կամքին: Մինիստրը շտապեց այցելել Գամբետտային եւ այդ տեսութեան հետեւանքն այն էր, որ մինիստրների խորհուրդը վճռեց հոգեւոր միաբանութիւնների գործը վերջացնել մինչեւ նոյեմբերի 9-ը, երբ պէտք է գումարվի պատգամաւորների ժողովը:

Վանքերը փակելու ժամանակ մի քանի տեղ հաւաքված ամբոխը թողնելով չէզոք ընդդիմադրութիւնը, հակառակվում էր վարչութեանը: Կանայք աչքի էին ընկնում իրանց կատաղութեամբ: Ներանք չէին բաւականանում արտաքսված հոգեւորականների ոտքերի տակ ծաղիկներ թափելով եւ նրանց առաջ ծունկ չոքելով, այլ սկսեցին ժանդարմների վրա ջուր ածել, քարեր գցել նրանց վրա եւ ամենավերջին փողոցային յիշոցներ տալ: Ռենի մէջ բարձր դասակարգին պատկանող մի տիկին իր արեւակալը ջարդեց պրեֆեկտի մէջքի վրա. Ավինիօնի մէջ մի ուրիշ տիկին պօլիցիական գործակատարին բաւական ծանր ապտակ տուեց: Այս քաղաքի մէջ հասարակ կանայք գնում էին պրեֆեկտի ետեւից նրան յիշոցներ տալով և երբ հասան արմատական ուղղութեան „Reveil du Midi“ լրագրի խմբագրատանը, փորձեցին քանդել տպարանը: Ձիաւոր ժանդարմները հազիւ կարողացան ցրվել այդ կանանցը: Մարսելի մէջ արտաքսված բենեդիկտները զգեստաւորված դուրս եկան փողոցը և հրաժարեցրին եկեղեցուց վարչութեան բոլոր անդամներին, որոնք մասնակցում էին հոգեւորականների աքսորմանը: Նոյն քաղաքի մէջ կապուսինների վանքի դռներից վաթսունը կոտրատեցին:

Մարսելի մէջ դոմինիկանների վանքի առաջ ամբոխը կամենում էր յարձակվել վանքի վրա: Այս անգամ պոլիցիականները ստիպված էին պաշպանել հոգեւորականներին և վանքի մօտ պահապան զինուորներ կանգնեցնել:

Պրոկուրօրները շարունակ հրաժարականներ են տալիս, իսկ արդարութեան մինիստրը չէ ընդունում նրանց հրաժարականները, այլ ուղղակի արձակում է ծառայութենից:

Ասում են, որ պապը մի նամակ է գրել Գիբեր արքեպիսկոպոսին, որով նա բողոքում է մարտի հրամանների կատարելու դէմ: Այդ նամակը երեւի շուտով կը տպագրվի: Պապական նունցիակը Փարիզում թողնում է իր տեղը, որ և երեւի ազատ կը մնայ, մինչեւ Ֆրանսիական կառավարութիւնը դեսպան կը նշանակէ պապի մօտ:

Քանի որ Գլօկէ Վալենսի մէջ ասած իր ճառով ցոյց է տալիս իր դիտաւորութիւնը մինիստրի պաշտօն ընդունել, Ալեմանսօ բացարձակ ձգտում է Գամբետտայի տեղը բռնել:

ՊՈՐՏՈՒԳԱԼԻԱՆ

—

Լօնդոնի մէջ հրատարակվող „Standard“ լրագրին հեռագրում են Թէհրանից հոկտեմբերի 31-ից քիւրդերի ապստամբութեան մասին: Պարսկական զօրքերի գլխաւոր հրամանատար Խիշմեդ—Դովլա Թէհրանի զօրաբաժնի և աւստրիական օֆիցերների հետ երեկ հասաւ Ռիզա, որ գտնվում է Գերուսսի նահանգի մէջ: Ուրմիայից եկած փախստականները հաղորդեցին գերապատիւ պ. Իստօնին Թաւրիզում, որ Հէյլ Իրադուլլահ առաջարկեց Ուրմիայի ամերիկացի միսիոնարներին իրանց տան վրա ամերիկական դրօշակ բարձրացնել, որպէս զի թշնամին կարողանայ նկատել այդ շինութիւնը և ձեռք չը տայ յարձակվելու ժամանակ: Նոյեմբերի 1-ից հեռագրում են: Այստեղ լուրեր են ստացված, որոնք ապացուցանում են, թէ քիւրդերի ապստամբութիւնը կատարեալ անաջողութեան է հանդիպում: Ուրմիայի զօրապետ Իզբալ—Դովլահ Թայմուր—փաշա-խանի զօրքերի հետ յարձակվեցաւ պաշարող քիւրդերի վրա և ջարդեց նրանց: Քիւրդերը մեծ կորուստներ կրելուց յետոյ փախան դէպի սահմանը և դատարկեցին Ուրմիայի նահանգը: Սուջբուլաղի նահանգը գրաւող քիւրդերի առաջնորդները անձնատուր եղան Մարաղայի մօտ բանակով կանգնած Թաւրիզի զօրքերի հրամանատար Էխտիմադ—Սուլթանէին և նրանից ներողութիւն են խնդրել: Քիւրդերը դատարկեցին Սուջբուլաղ քաղաքը:

Նոյն լրագրին Թէհրանից նոյեմբերի 1-ից հեռագրում են քիւրդերի ապստամբութեան մասին: Հոկտեմբերի 28-ին Ուրմիան պաշարող քիւրդերը շէյխ Իրադուլլահի որդի Պաղիրի առաջնորդութեամբ գիշեր ժամանակ յարձակվեցին քաղաքի վրա, բայց մեծ կորուստներով յետ մղվեցան քաղաքային զօրքերից: Անգլիական գլխաւոր հիւպատոս պ. Աբբօտ դուրս եկաւ Ուրմիայից և վերադառնում է Թաւրիզ Սուջբուլաղի և Մարաղայի ճանապարհով: Սրանից կարելի է եզրակացնել, որ դեռ մի քանի օր առաջ քրդերի ձեռքին եղած այդ նահանգների մէջ հանգստութիւնը վերականգնած է:

—

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԳՈՐԾԵՐ

—

Լօնդոնից „Polit. Corresp.“ լրագրին գրում են հոկտեմբերի 22-ից: Ասում են, որ յունական կառավարութիւնը դիմել է անգլիական մինիստրութեանը չափազանց կարեւոր առաջարկութիւններով: Յունական կառավարութիւնը յիշեցնում է, որ Բերլինի կոնֆերենցիան կայացաւ Անգլիայի առաջարկութեամբ, որ այժմեան կառավարութեան անդամներից շատերը խոստացան Յունաստանին օգնել նոր նահանգները գրաւելու ժամանակ և այդ խոստմունքների պատճառով արած պատերազմական պատրաստութիւնները Յունաստանին զրեթէ կորստեանը հասցրին: Անգլիական կառավարութենից խնդրվում է ազատել Յունաստանին այն դժուարութիւններից, որ պատճառեցին պատերազմական պետութիւնները և իսկական միջոցներ գործադրել Բերլինի կոնֆերենցիայի վճիռները իրագործելու համար: Այդ առաջարկութիւնները մոլորեցրին անգլիական կառավարութեանը: Գլադստոն թէպէտ հետաքրքրված է յունական խնդրով, բայց չէ կամենում Անգլիայի անունով նոր պարտականութիւններ վերցնել և մտադիր է իր ցանկութեան համեմատ գործել և այնպիսի ժամանակ, որ ինքը յարմար կը գտնի: Իսկապէս Դուլցինիօի գործն էլ դեռ վերջացած չէ և պ. Դոշենի տուած տեղեկութիւններից երեւում է, որ այդ քաղաքը Ձերնօգորիային յանձնելուց յետոյ, դարձեալ նոր դժուարութիւններ կառաջանան և այդ հարցը դեռ ևս երկար ժամանակ անվճիռ կը մնայ: Արեւելեան գործերի անորոշ դրութիւնը ստիպում է անգլիական կառավարութեանը զգուշանալ, ուրեմն Յունաստանին տուած պատասխանը այնպէս կը լինի կազմված, որ Անգլիան նոր պարտականութիւններ չընդունի: Այստեղի կառավարչական շրջանները համոզված են, որ Թիւրքիայի քայքայումը ժամանակից հարց է դարձել: Զարմանալի չէ ուրեմն, որ կառավարչական շրջանները քննում են օտարօտի նախագիծներ Թիւրքիայի վերաբերութեամբ:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳՐԵՐՆԵՐ

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 3 Նոյեմբերի: Պաշտօնապէս հաղորդված է. Պետերբուրգի Նահանգի գվարդիայի ժամանակաւոր հրամանատարը զինուորական դատարանի վճիռը 16 յանցաւորների մասին հաստատեց: Բուխ և Զուբկովսկի դատապարտվածներին 20 տարիների փոխարէն 15 տարով ենթարկել տաժանակիր աշխատանքների: Թագաւոր Կայսրը բարեհաճեց հրամայել Շերեմետեւի, Տիխօնովի և Օկլադսկու մահուան պատիժը փոխել և ենթարկել նրանց տաժանակիր աշխատանքների անժամանակ:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ОБЪ ИЗДАНІИ

ВЪ ТИФЛИСѢ

ХУДОЖЕСТВЕННО-ЮМОРИСТИЧЕСКАГО ЖУРНАЛА

„ФАЛАНГА“

«ФАЛАНГА» будетъ выходить еженедѣльно по воскресеньямъ. Первый нумеръ выйдетъ въ среднихъ числахъ ноября мѣсяца текущаго года. Нумера нынѣшняго года предназначаются исключительно для розничной продажи, которая будетъ организована въ Тифлисѣ и въ прочихъ городахъ Имперіи. По подпискѣ-же журналъ будетъ доставляться съ января мѣсяца будущаго 1881 года.

УСЛОВІЯ ПОДПИСКИ:

Съ доставкою на домъ.

На 1 годъ..... 8 р. — к.
„ 6 мѣсяцевъ..... 4 р. 50 к.
„ 3 мѣсяца..... 2 р. 50 к.

Съ разсылкою по Имперіи.

На 1 годъ..... 8 р. 50 к.
„ 6 мѣсяцевъ..... 5 р. — к.
„ 3 мѣсяца..... 2 р. 75 к.

Подписка и объявленія принимаются въ конторѣ редакціи, на Эриванской площади, въ домѣ Харазова, № 3.

Контора открыта ежедневно отъ 9 до 2 и отъ 5 до 7 часовъ вечера.

ОТЪ РЕДАКЦІИ „ФАЛАНГА“.

Статьи, стихотворенія и корреспонденціи, предназначаемыя для напечатанія въ «Фалангѣ», должны быть за подписью автора и съ адресомъ его, иначе печатанію они подлежать не будутъ.

Статьи безъ обозначенія условій гонорара будутъ считаться редакціей безплатными.

Редакція оставляетъ за собою право сокращать и измѣнять присланныя рукописи по своему усмотрѣнію.

Статьи, признанныя редакціей неудобными къ печати авторамъ не возвращаются.

Для объясненій съ редакторомъ редакція открыта по понедѣльникамъ, средамъ и пятницамъ, отъ 12 до 3 часовъ по полудни. Адресъ: Тифлисъ, Эриванская пл., домъ № 3.

Въ трудахъ редакціи непосредственное участіе примутъ **Н. В. Симборскій и Горесмѣховъ** (Это не я). Изъ числа лицъ, изъявившихъ согласіе быть сотрудниками «Фаланги», назовемъ пока **Д. Д. Минаева, А. И. Пальма, Н. А. Плещеева, К. А. Бебутова, И. Ф. Тхоржевскаго** (*Иванъ да Марья*), **«Наслѣдственнаго поэта», Ак. Церетели.** Каррикатуры будутъ исполняться художникомъ **Петерсономъ** (псевдонимъ).

Редакторъ-издатель **Ив. Питоевъ.**

2—10

ՀՐԱՒԷՐ ՄՕՍԿՎԱՅԻ ԳԻՒՂԱՏՆՏԵՍԿԱՆ կայսերական ընկերութեան շերամապահութեան մասնաժողովից։ Բարձրագոյն հաստատված կանոնադրութեան հիման վրա Մոսկվայի մէջ 1881 թուականի մայիսի 15-ին կը լինի համայն ռուսական արդիւնաբերական-արհեստական հանդէս։ Այդ հանդէսի գիւղատնտեսական բաժնի մէջ առանձին տեղ կունենան շերամապահութեան վերաբերեալ առարկաները։ Շերամապահութեան էկսպօնենտներին հրաւիրելը յանձնված է Մոսկվայի շերամապահական Մասնաժողովին, որը նրանց և մասնաժողովի անդամների մէջ համաձայնութիւն կայացնելու համար առանձին յանձնաժողով նշանակեց։

Այս հանգամանքը 'ի նկատի ունենալով 1881 թուականի հանդէսի շերամապահական բաժինը կազմող մասնաժողովը դիմում է բոլոր շերամապահներին և Մասնաժողովի անդամներին, խնդրելով մասնակցել գործին և հասցնել մայրենի արդիւնաբերութեան շերամապահութեան վերաբերեալ առարկաներ։

Պ.պ. էկսպօնենտները եւ մասնաժողովի անդամները, որոնք ցանկանում են ներկայացնել հանդիսին շերամապահութեան վերաբերեալ առարկաներ, թող բարեհաճեն այդ մասին վաղօրօք յայտնել մինչև դեկտեմբերի 1-ը 1880 թուականի, հասցնելով իրանց յայտարարութիւնները Մոսկվա, Պոլիտեխնիկական մուզէյ, շերամապահական մասնաժողովի քարտուղար Պ. Լ. Դմ. Լեվինսկու անունով։ Իսկ առարկաների ուղարկելը կը սկսվի 1881 թուականի մարտի 1-ին եւ կը շարունակվի մինչև ապրիլի 15-ը։

Ուղարկված յայտարարութիւնների մէջ էկսպօնենտները պէտք է նշանակեն. 1) ուղարկված առարկայի անունը, 2) քանակութիւնը, թիւը, ծանրութիւնը կամ չափը, 3) հարկաւոր տարածութիւնը հանդիսի մէջ քառակուսի արշիններով յատակի կամ պատի վրա եւ 4) էկսպօնենտի ստորագրութիւնը եւ մանրամասն հասցէն։ 1881 թուականի համայն ռուսական հանդիսի շերամահական բաժնի մանրամասն պրոգրամը ուղարկվում է բոլոր ցանկացողներին անվարձ։

1—4 (3)

ОБЪ ИЗДАНІИ

въ 1881 году въ г. Тифлисѣ еженедѣльнаго русскаго юридическаго журнала

„СУДЕБНЫЕ ПОРЯДКИ“

Журналъ „Судебные Порядки“ будетъ выходить съ января 1881 года по воскресеньямъ, въ объемѣ не менѣе двухъ листовъ небольшого формата, подъ редакціею присяжнаго повѣреннаго округа Тифлисской судебной палаты Александра Ивановича Карабекова, по слѣдующей программѣ:

ПРОГРАММА

еженедѣльнаго юридическаго журнала „Судебные Порядки“

1) Передовыя статьи, заключающія въ себѣ общіе взгляды на состояніе правосудія въ судахъ гражданскихъ и положительнаго законодательства.

2) Судебные процессы имѣющіе общественный интересъ.

3) Юридическія замѣтки и изслѣдованія, имѣющія предметъ обсужденіе общихъ началъ права, отдѣльныхъ законоположеній, мѣстныхъ обычаевъ, судебныхъ рѣшеній, опредѣленій и т. п.

4) Юридическія извѣстія, заключающія въ себѣ свѣдѣнія о явленіяхъ общественной жизни, имѣющихъ юридическій интересъ.

5) Библіографическія извѣстія, заключающія въ себѣ свѣдѣнія о вновь выходящихъ юридическихъ сочиненіяхъ.

6) Офиціальныя извѣстія, содержащія въ себѣ свѣдѣнія о новыхъ законоположеніяхъ, распоряженіяхъ правительства, движенія по службѣ, судебные указатели и резолюція по дѣламъ, назначеннымъ къ слушанію въ Тифлисскомъ окружномъ судѣ и Тифлисской судебной палатѣ.

7) Фельетонъ: а) полемическія статьи, не имѣющія характера передовыхъ статей, и б) отдѣльныя мелкія статьи юридическаго характера, не вошедшія въ составъ предидущихъ отдѣловъ.

8) Объявленія.

ПОДПИСНАЯ ЦѢНА: на годъ съ доставкою въ Тифлисѣ и пересылкою въ другіе города Россіи **семь** рублей, на полгода, для подписчиковъ г. Тифлиса **четыре** рубля, для иногородныхъ **четыре рубля пятьдесять коп.**, по почтовому союзу—на годъ **десять** руб.; отдѣльные нумера по **двадцати** коп.

Подписка принимается: въ Тифлисѣ: до 1 декабря сего года въ квартирѣ редактора, на Коджорской улицѣ, домъ № 8, а съ 1 декабря въ помѣщеніи редакціи —въ пассажѣ каравансарая Тамамшевыхъ, на Эриванской площади, въ г. Елисаветполѣ—уполномоченнымъ при управленіи государственными имуществами Р. И. Карабеговымъ. въ г. Кутаисѣ—присяжнымъ повѣреннымъ М. А. Кикодзе, въ г. Эривани—присяжнымъ повѣреннымъ В. И. Егіазаровымъ.

Редакторъ-издатель **А. КАРАБЕГОВЪ.**

(10) 4.

ՄԻ ՕՐԻՈՐԴ, որ ուսում է ստացել Փարիզում և Լոնդոնում, տալիս է ֆրանսերէն և անգլիերէն լեզուների դասեր։ Հասցէն Սապէրնայա փողոց, № 37։

6—6

ԾԱԽՎՈՒՄ Է ՄԻ ԿՏՈՐ ՀՈՂ 400 քառակուսի սաժէն Կուր գետի երկրորդ անցքի մօտ, իւրաքանչիւր սաժէնը 25 ռուբլիով։ Հարցնել Միխայլովսկայա փողոցի վրա, Գուրգէնբէկովի տանը, № 5։

5—5

ՌԵՐԼԻՆԻ ՆՈՐԱՁԵՒ ՌԱԶՄԸ ՌԱՅՎԱԾՈ է ներկայ տարվայ հոկտեմբերի 15-ից, Սօլօլակի, Պանօվսկայա փողոց, տ. Գօնչարովայի խանութից վերև, կնեազ Ռեբուեթովի տանը №№ 2 և 3։ Այդտեղ կարելի է ստանալ մեծ քանակութեամբ կանանց և երեխաների նորաձև հագուստներ, ինչպէս բօտօնդներ, դօլմանները, զանազան տեսակի պալտօներ և մեծ քանակութեամբ կանանց և երեխաների նորաձև գլխարկներ և նրանց պատկանելիք։ Նոյն տեղը կարելի է գտնել զանազան նկարների դրապներ, կաստօրև թաւիշ (մախմուր)։ Ընդունվում են նոյնպէս ամեն տեսակ պատուէրներ։ Գները ամենաչափաւոր են։

5—10

ՎԱՐԺՈՒՀԻ ՐՕԴՕՉԵՎԻՉ ԴԱՍԿԱԼ է փնտռում և պատրաստում է երեխաներին բոլոր ուսումնարանների համար։ Հասցէն կարելի է իմանալ **ԷՆԳԻՄԵՆԵՑԻ** գրավաճառանոցի մէջ։

3—4

Մինչև առաջիկայ 1881 թիւ յունվար ամիսը ՇՈՒՇԻ քաղաքում կը տպագրվի և առանձին գրքով լոյս կը տեսնի ԲԱՅՏԻՒ «ԽՆԴԹԸ» անունով վիպասանութիւնը։ Տպագրութիւնը կը լինի գեղեցիկ և մաքուր թղթի վրա։ Իւրաքանչիւր գրքի գինը կանխապէս բաժանորդագրողների համար նշանակվում է 1 ռուբլի։ Իսկ տպագրութիւնից յետոյ գնողների համար գինը կը բարձրանայ։ Պ. պ. բաժանորդները թող բարեհաճեն իրանց վճարը ուղարկել այս հասցէով. Шуша. АВЕЛЬЮ ДАВИДОВИЧУ АПРЕСЯНЦУ. Въ конторѣ АРУНЯНЦА.

Հրատարակիչ ԱԲԵԼ Դ. ԱՊՐԻՍԵԱՆՑ

10—10

ՎԱՐԺՈՒՀԻ ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՅԵՐԷՆ ԵՎ ՌՈՒՍԵՐԷՆ ԼԵԶՈՒՆԵՐԻ ԴԱՍԵՐ։ Հասցէն Սապէրնայա փողոց, № 37։

6—6

ՕՐԱՑՈՑՑ
1881 Թ.

Ու. Յ. Տէր-Աբրամեանցի, գինն է 15 կոպէկով։

Վաճառվում է Զաքարեա Գրիգորեանցի «Վոլկասեան գրավաճառանոցում Տփխիս։

9—20

Ֆ. Կ. ԶԱՄԼԻՆՍԿԻ ԴԵՂԱՏԱՆ ԿԻՑ ՄԻԽԱՅԼՈՎՍԿԱՅԱ ՓՈՂՈՑ Տ. ԿՕՏՐԻՆԻ։ Ամենայն օրը ԸՆԴՈՒՆՎՈՒՄ ԵՆ առաւօտեան 11 ժամից մինչև երեկոյեան 5 ժամը ներքին, երեխայական, ջղային, վեներական և կաշու հիւանդութիւններ ունեցող հիւանդները։

6—6

Բրիլեանի, ոսկու և արծաթի իրեղէնների **ՏԷՐ-ՆԻԿՈՂՈՍԵԱՆ ԽԱՆՈՒԹԸ** և **ԱՐՀԵՍՏՆՈՑԸ** Կաթօլիչեսկայա փողոցի անկիւնից Արմենական բազարի վրա տեղափոխված է Դըվօրցօվայա փողոցը **ԱՐԾՐՈՒՆՈՒ** տանը։ Իրեղէններ գնելու, պատուէրներ տալու և իրեղէնները նորոգելու համար խնդրում եմ դիմել իմ խանութը։ Նոյն տեղը ստացված է մեծ քանակութեամբ ոսկէ, արծաթէ և բրիլեանտի իրեղէններ և ժամացոյցներ։

Մ. ՏԷՐ-ՆԻԿՈՂՈՍԵԱՆ

3—3 (2)

ՎԱՐԺՈՒՀԻ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑ

ԲՐՕՐՈՒՆՈՒ ԳԻՂԱՏԻՊՈՒՄ

վարձով տրվում են

ԽԱՆՈՒԹՆԵՐ

4—10

Անանկացած ՋԱՆՋՈՒՂԱՋՈՎ եղբայրների գործերի համար նշանակված ՄՐՑՈՂԱԿԱՆ ՎԱՐՁՈՒԹԵԱՆ կարգադրութեամբ, ջանջուղաջովների մեծ խանութի մէջ, Գօլօվինսկայա հրապարակի վրա ՄԻՐԻՄԱՆՕՎԻ ՏԱՆԸ ապրանքներ ԿԸ ԾԱԽՎԵՆ, նոյնպէս չուգունի ՎԱՐԱՐԱՆՆԵՐ հատով և մեծ քանակութեամբ ամենայն օր առաւօտեան 10 ժամից մինչև 2 և երեկոյեան 5—8 ժամը։

Խնամակալ պ. Լիբերմանի։

Дозволено цензурою. Тифлисъ, 4 Ноября 1880 года. Типографія Главн. Управ. Намѣстн. Кавказск.